

դառն փոփոխութիւնն էր. կ'երեւակայէր թէ Նոյն գիշերը իւր կինն ու զաւակները ի՛նչ մտատանջութեան մէջ էին, եւ յանկարծ միտքը կ'ուզար Արծրունեաց մեծ տիկինը Յռիփսիմէ՝ այդ ծանրագլուխ եւ վսեմ կինը իբրեւ թէ յիմարացեալ՝ մաղերը փետտելով, առանց վերարկուի, առանց քօղի, իւր երկու զաւակներուն ետեւէն իւր կամօք դիմելով աքսոր եւ ի բանտ:

Բայց ձեռքը ճակտին եւ աչքերուն տանելով՝ մէկդի վարեց այս մտածութիւնն էլ, շուրջը աչքը պտըտցնելով տեսաւ Յովնանու երկու սայրասուր աչքերն, որ իրեն կը նայէին, եւ կշռելով թէ այդ մարդէն կախուած էր իրեն բախտը, վասնզի աւագակները իր բերնին կը նայէին՝

– Մա՛րդ, ո՞վ ես դու,– ըսաւ ոչ իշխանաբար՝ այլ յուսահատաբար:

– Դու որ գիտես, ինչո՞ւ կը հարցնես, դու չէի՞ր, որ քիչ առաջ աւագակ, գռեհիկ, սիւլքոր կ'անուանէիր զիս: Ահա ես այդ երեքն էլ եմ՝ եթէ հաճիս:

– Այո՛, ես այդ խօսքերես բառ մը ետ չեմ առնուր, միայն այդ կը հարցնեմ քեզ թէ դու կին, զաւակ ունեցե՞ր ես. եթէ ունեցեր ես՝ միտքդ բե՛ր թէ այս գիշեր իմ կինս, իմ զաւկներս, իմ տունս ի՛նչ վիճակի մէջ են. ի՛նչ ողբոց եւ արտասուաց տուն ըրիր դու, դո՛ւ իմ տունս, անօրէ՛ն անաստուած:

Եւ այս խօսքերը զրուցելով աչքերէն հեղեղի պէս այրող արտասուք կը վազէին: Վարդապետը եւ բոլոր խութեցիք մէկ մը Յովնանու, մէկ մը այս մարդուն կը նայէին, եւ երիտասարդ լեռնցիք, որոնց սիրտը իրենց ժայռերուն խստութիւնը չունէր, գլուխսին մէկդի կը դարձնէին, իբրեւ թէ Մուշեղին տան տեսարանը տեսած լինէին: Իսկ Յովնան աս խօսքերէն իբրեւ թէ ցնցուած երկու ծունկի վրայ գալով, ընթուիները ցցուած, աչուրները սոսկալի փայլ մը առած.

– Մուշե՛ղ, Մաւշե՛ղ,– գոռաց,– ես քու տանդ վիճակը ոչ այսօր, ոչ երէկ, ոչ ամիս մը առաջ այլ վեց ամիս առաջ երեւակայեցի եւ